



ՄիաՄանթո

Հոգիս

ՄիաՄանթի՛կ հոգիիս շահերը, որ վայրկեան առ վայրկեան
Մտածումս կ'արեգակեն՝ գանիկա խաւարին մէջ սուգելէ յետոյ...
Հոգիս ա'ն է, որ բիրաւոր անգամ ձեր ամէնուն ցան ապրեցաւ,
Ա'ն է, որ անդունդի մը մէջ՝ իր մոխրին վրայ ծնրադիր՝
Հարագատ ու շղթայակապ քոյրերու աքսորը կու լայ...
Հոգիս այն վա'յրն է, ուրկէ արիւնոռուշտ լուսին մը բարձրացաւ
Անմեղներու կոտորածէն ծովացեալ դաշտի մը վրայ...
Ու ա'յն հողմակոծ անտառն է, որուն աւագաններուն շուրջ՝
Օ՛, եղբայրական արիւնի հեղեղներ կը հոսին...
Հոգիս այն երկի'րն է, ուր որք եւ սեւահեր տղաներու բազմութիւններ,
Անդադար սուրերու շողիւններէն հալածական,
Աղեխարշ ճիշերով փլատակներու մէջէն կը փախչին...
Հոգիս այն երկի'նքն է, ուրկէ յոյսին բոլոր աստղերը թափեցան,
Ու այն մարմարակերտ տաճա'րն, ուր կեանքը ծունկի եկած՝
Խելայեղօրէն Ամենագութ մահը կը պաղատի...
Հոգիս Աւետարան մըն է, որուն վրայ տժգոյն ու յուսահատ ձեռքեր
Անկարելի քաւութեան մը համար, ապարդիւնօրէն, դեղին թերթեր կը
թղթատեն...
Հոգիիս մէջ երբեմն արշալոյսներ կ'արիւնին,
Եւ պաղատող աղաղակներու անասելի համանուագ մը կ'որոտայ.
Հոն սրածումներու աշխարհ մը կայ, ուր սարսափահար կեանքեր
Ձեր շարժումին, ձեր օգնութեան, ձեր ձայնին կը սպասեն...
Հոգիիս մէջ հերոսներու ծնունդ մը կայ եւ մեռելներու թափօր մը միանգամայն...

Հոգիս այսօր անձրեւ մըն է մորթագերծուած դիակներու վրայ
Ու նայուածք մըն է, որ անտիրական դագաղները կը թափանցէ,
Հոգիս բարկութեան ու ցասումի հով մըն է այս գիշեր,
Որուն վագրին տակ արիւնարբու ռազմագունդերը պիտի նահանջեն...
Ու բոլոր գերեզմանոցները, իրենց խորերէն, ահագնաբար,
Ձեր նայուածքներուն առջեւ՝ դէպի վե՛ր պիտի շրջին...
Որպէսզի վերջապէս ճանչնաք, ո՛վ անկարեկիր ներկաներ,
Այն բոլոր մարտիրոսները, որ ձեր բոլորին համար
Անձնութեան եւ կամքի առաւօտ մը ինկան...
Հոգիս մահատեսիլ աշուն մըն է, որ այս ամէնուն վրայ
Իր մշուշը եւ իր տերեւներուն հոգեվարքը կը սրսկէ.
Բայց հոգիս եւ Կարմիր Յուսահատ մըն է, որ անընկճելի Յոյսին համար
Առաքեալի մը պէս դէպի արգասաբեր Մահը պիտի թեւէ...: